ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/30

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով ՀՀ կադաստրի կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ծրագրային փաթեթների մշակման ծրագրերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ի կողմից 18.03.2020թ. ներկայացված (18.03.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/30 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 18.03.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը 2009 թվականից զբաղվում է համակարգչային ծրագրավորմամբ և ծրագրային ապահովման սպասարկմամբ և Ընկերությունը մասնակցել է ԿԿ-ԳՀԾՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին

(հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին գնային առաջարկ է ներկայացրել ևս մեկ ընկերություն՝ «ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ» ՍՊԸ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 12-ի թիվ 3 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները, համաձայն որի՝ հայտերը համապատասխանել են հրավերի պահանջներին և որոշում է կայացվել առաջին տեղ զբաղեցնող մասնակցի՝ «ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ» ՍՊԸ հետ կնքել պայմանագիր:

Ընկերությունը նշել է, որ իր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) խախտում և հայտերը չի գնահատել Օրենքի 34-րդ հոդվածին համապատասխան, քանի որ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային շտեմարանից ստացվող տեղեկությունների համաձայն՝ առաջին տեղ զբաղեցնող «ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ» ՍՊԸ-ն ՀՀ-ում գրանցվել է 13.12.2019թ, գրանցման համար՝ 290.110.1105955 և չի համապատասխանում հրավերի պահանջներին այն է.

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի 4.6 կետը սահմանում է, որ կատարողը պետք է ունենա անշարժ գույքի կառավարման համակարգերի մշակման և սպասարկման առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ: Աշխատանքների վերջում կատարողը պետք է կոմիտեին հանձնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների կատարմանը վերաբերող բոլոր տվյալները և ծրագրային փոփոխությունների կոդերը ելակետային նյութերը /source code/:

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

«**տնտեսական մրցակցություն կամ մրցակցություն**»՝ ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները.

«մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման հատկանիշներ»՝ անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների քանակի կրճատում, ապրանքի գնի բարձրացում կամ իջեցում, որոնք կապված չեն ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների համապատասխան փոփոխությունների հետ, անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքային շուկայում ինքնուրույն գործողություններից հրաժարում, ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների սահմանում տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունների արդյունքով, կամ այլ անձի կողմից տրված՝ նրանց համար պարտադիր կատարման ենթակա ցուցումներին համապատասխան, կամ անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների գործողությունների համաձայնեցման արդյունքով, այլ հանգամանքներ, որոնք տնտեսվարող սուբյեկտի համար հնարավորություն են ստեղծում միակողմանիորեն ազդել

ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա, ինչպես նաև պետական մարմինների և (կամ) դրանց պաշտոնատար անձանց կողմից ապրանքների կամ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ օրենքով չնախատեսված պահանջների սահմանումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը ներկայացված բողոքի պահանջի 1-ին կետով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին չեղյալ համարել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 12-ի թիվ 3 որոշումը, հրավիրել նոր նիստ և հայտերի գնահատումն իրականացնել Օրենքին համապատասխան, կայացնել նոր որոշում՝ հաշվի առնելով մասնակցի Ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան հայտ ներկայացնելու փաստը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան հայտ ներկայացրած մասնակցի նկատմամբ կիրառել օրենքով սահմանված բոլոր միջոցները:

Բողոքի պահանջի 2-րդ կետով՝ եթե խախտվել է բողոքի 2-րդ կետում նշված դրույթը և Ընթացակարգի Հավելված 1-ի 4.6 կետում նշված պահանջի չթույլատրված կիրառությունը հանգեցրել է վերը նշված օրենքների խախտում, ապա չեղարկել Ընթացակարգը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.03.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>2. Կադաստրի կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 19.03.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/4249-2020 գրության՝ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու պահանջի վերաբերյալ, Կադաստրի կոմիտեն գրությամբ հայտնել է, որ տրամադրում է «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/15» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2020/30 ընթացակարգի շրջանակներում 24.03.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/30 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Կադաստրի կոմիտեի կարիքների համար ծրագրային փաթեթների մշակման ծրագրերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/15» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է ***25.02.2020թ.***:

2. Կադաստրի կոմիտեի կողմից կազմակերպված «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկաների մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է ***19.03.2020թ.***:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ի 18.03.2020թ. ներկայացված բողոքը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) **<u>գնման գործընթացի կազմակերպում</u>** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **<u>գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:</u> Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է**, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով <u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում</u> գրավոր սահմանվում են՝**

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) **գնումները համակարգող**

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **<u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում</u> պատասխանատու ստորաբաժանումը՝**

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:...

Կադաստրի կոմիտեի կողմից «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/15» ծածկագրով բաց մրցույթի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել է ***<u>25.02.2020թ.:</u>***

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննության շրջանակներում դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել Ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակված լինելը հավաստող համապատասխան հղումը և/կամ կայքից արտատպված փաստաթուղթը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ այն հրապարակվել է ***19.03.2020թ.-ին***՝ ավելի ուշ քան, Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը, ընդ որ վերոհիշյալ նորմերից բխում է, որ պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և գնումները համակարգողի համապատասխան իրավասություններն առաջանում են գնումների պլանի հրապարակման հաջորդող օրվանից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/15» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել է գնման գործընթացի կազմակերպման «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները, ուստիև գտնում եմ, որ Ընթացակարգը պետք է հայտարարվի չկայացած:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգը ի սկզբանե կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ուստիև այն հայտարարվում է չկայացած, հետևաբար նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման շրջանակներում քննության առարկա չի դարձնում բողոքով վիճարկվող Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումների և գործողությունների իրավաչափության հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ի կողմից 18.03.2020թ. ներկայացված բողոքը մերժել:
2. Պարտավորեցնել «ԿԿ-ԳՀԾՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**